Հրանտ Մաթևոսյան

Անդրանիկ Օզանյան

Նկատված է. մեկ հազարամյակ առաջ, երբ մեր ոստաններն ավերվեցին, երբ մեր երկրի ազնվականությունը գլխատվեց – ինքնիշխանությունը հանգրվանեց հայ գյուղացու տանը. ասել է թե՝ հայ մարդու, հայ գյուղացու տունը Լոռվա սարերից մինչև Սասուն ու Տավրոս, օրրանը եղավ մեր հնօրյա փառքերի և գալիք հույսի, հայ գյուղացու տունը վիպերգեց իր եղած ու չեղած արքաներին ու հերոսներին և սպասեց ծնունդին իր այն զավակի, որ պետք է գար և հայոց մեր լուռ աշխարհը լցներ ուրախության ու հաղթանակի աղաղակով, պետք է գար և նման լիներ մեր անմոռաց ժամանակների հերոսներին ու թագավորներին, բայց շատ ավելի՝ հերոսի ու թագավորի ժողովրդական մեր իդեալը լիներ:
Հայոց աշխարհի փոքր հովտով հայոց մեր երկար ժամանակները հաղթած կամ շղթայված շատ իշխանների են անցընել, փառքուպսակի արժանի են եղել նրանցից շատ-շատերը, բայց և նրանցից ոչ մեկը չի զորում համաժողովրդական վերաբերմունքի միջով իր անցքը հրճվանքի և ուրախության, սիրո և զորովի, հույսի և վստահության շքերթ դարձնել այնպես, ինչպես թագավորի ու հերոսի մեր իդեալը, մեր անիրականը, մեր վիպերգայինը՝ մեր Դավիթը, Սասունցին. դարեր ու դարեր մինչև այսօր ու մինչև վաղը և վաղվա վաղը՝ ոչ ոք չի կարողանում մեր մեծից ու փոքրից կորզել այն ավաղն ու ափսոսը, արցունքն ու ժպիտը, որ միայն Դավթի համար են՝ Սասունցու, անիրականի, դյուցազներգականի, մեր համազգային իդեալի:
Զորավար Անդրանիկը, Անդրանիկ Օզանյանը մեզ համար նույնքան առասպելական է, դյուցազներգային, վիպերգային, ինչքան Դավիթը՝ իրական. համաժողովրդական սիրո հրապարակը այդ երկու իրական և վիպերգային հերոսների երթն է դարձնում պսակյալ շքերթ, մարդու և զինվորի իր իդեալով իր

Անդրանիկին է հանդերձավորում, և իր Անդրանիկը՝ ժողովրդի Անդրանիկը, իդեալ մարդու կերպարը իր վրա է առնում ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես Դավիթ Սասունցին Մհեր Սասունցու զենքուզրահն է իր վրա առնում:
Որպես հայոց մեր տան սպասված որդի՝ Անդրանիկը հանդերձավորվեց, իր ժողովուրդը նրան հանդերձավորեց իր վիպերգի զենքուզրահով, և Անդրանիկի ստույգ իրականությունը ոչնչով չխաթարեց նրա առասպելականությունը. նրա վախճանի ու ծննդյան տարիների ստուգությունը, տված մարտերի ու ձախողումների ու ծննդավայրի ստուգությունը, մարդկայնորեն նրա խոցելիությունը ամենևին չեն խանգարում նրան դարձյալ վիպերգից եկած և երգ, վիպերգ, առասպել վերադարձած տեսնել, երբ մեր հերոսական էպոսն ու ինքը Անդրանիկը նույն և մեկ ժամանակի ծնունդ են, և հայտնի չէ, թե նրանցից ով ում վերածնեց - Զեյթունի հերոսամարտը, Աղբյուր Սերոբը, Սոսե մայրիկը, Չաուշ Գևորգը, ինքը Անդրանի՞կը սերեցին մեր վիպերգը, իմ այդ տրեխավոր փաշաների կենարար շնչի վրա՞ մեր դյուցազներգը ելավ մեր գեղջուկ հայ տնից, թե՞ վիպերգը արթնացրեց նրանց և իշխանահասակ կանգնեցրեց հայոց մեր աշխարհում:
Նրանք մեկ և նույն ճանապարհի ճամփորդներն էին՝ Անդրանիկը և վիպերգը, միմիյանց լրացնելով, միմյանց սովորեցնելով, միմյանցից սովորելով, շտկելով, հաստատելով, միմյանց զորացնելով գալու էին, և նրանց ճանապարհն անվախճան էր: Նրանք հայոց իրենց հեռաստաններում սպասողների բազմություններ ունեին, այդ բազմությունները մենք ենք, և բազմությունների բազմություններ ունեին, դրանք մեր թոռնեթոռներն են, և հավերժի այդ ճամփորդների ճանապարհը կվերջանա՝ երբ իրենց հեռաստաններում այլևս բազմությունների սպասումն չի լինի:
Եվ ուրեմն փառք մեզ՝ նրանց կանչողներիս, նրանց սպասողներիս՝ որ նրանց անմահության, նրանց անվերջության երաշխավորն ենք, և փառք իրենց, փառք իրեն Անդրանիկին՝ որ իր որդիների և որդվոց որդիների հայոց մեր անցյալը անհուշ ու անանցյալ չթողեց: Նա մեր կերպարին վեհություն է բերում, մեր ձուլվածքին ազնվություն ու ազնվականություն է բերում, ռազմիկի մեր վարքին՝ արծվենի ճախր, հազար փառք իրեն:
20.02.2000թ.